ԿԱՐԾԻՔ

Ադելինա Արմենի Սարգսյանի՝ «Գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» վերտառությամբ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կարևոր քրեաիրավական նշանակություն ունի հանցագործությունների արդյունավետ քննության և բացահայտման, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի գործում, մասնավորապես՝ հանցավորության մակարդակի նվազեցման տեսանկյունից: Այս առումով գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ընդհանուր և հատուկ նորմերի կատարելագործումը կբարձրացնի դրանց դերը և նշանակությունը իրավակիրառ պրակտիկայում: Բացի այդ, պետք է ընդգծել գործուն զղջալու ինստիտուտի կարևոր դերը՝ հանցագործի անձի սոցիալականացման և հանցագործության կատարման արդյունքում ավելի ծանր հետևանքների կանխարգելման տեսանկյունից:

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող օրենսդրական կարգավորումների անկատարությունը, պրակտիկայում կիրառման արդյունավետության ցուցանիշների բացակայությունը նեղացնում են դրա իրագործման սահմանները և վերահաստատում են խորքային տեսական հետազոտության և գիտնականորեն հիմնավորված առաջարկների մշակման անհրաժեշտությունը, որոնք կոչված են լուծելու նշված խնդիրները:

Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին առնչվող հարցերի վերաբերյալ նոր մոտեցումներ են ամրագրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Այս առումով էապես կարևորվում է նաև Նախագծում առկա նոր իրավակարգավորումները քննարկման առարկա դարձնելը և գործող օրենսդրության հետ համեմատական վերլուծություն իրականացնելը:

Հարկ ենք համարում արձանագրել, որ ատենախոսի կողմից իրականացված հետազոտությունն ընդգրկել է բավականին ծավալուն առարկա՝ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված

հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերը, Նախագծի կարգավորումները, միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հեղինակի կողմից հետազոտության առարկան կազմող վերը նկարագրված հիմնահարցերի ուսումնասիրման միջոցով գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու՝ որպես քրեաիրավական ինստիտուտի էության բացահայտումը թույլ է տալիս պարզել դրա առանձնահատկությունները, ինչպես նաև նրա տեղը և դերը հարակից քրեաիրավական ինստիտուտների համատեքստում: Իր հերթին հետազոտության ընթացքում արված հետևությունները պայմանավորում են ՀՀ քրեական օրենսգրքում համապատասխան դրույթների վերաիմաստավորման և կոնկրետացման անհրաժեշտությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Ա. Սարգսյանին հաջողվել է հասնել իր առջև դրված ուսումնասիրության նպատակներին: Վերոգրյալը հիմնավորվում է ատենախոսի կողմից առաջ քաշված հետևյալ խնդիրների լուծմամբ.

- խորությամբ ուսումնասիրվել է գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը.
- բացահայտվել են գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանների իրավական կարգավորման առանձնահատկությունները.
- վեր են հանվել Հատուկ մասի նորմերում ամրագրված՝ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու որոշ հատուկ տեսակների իրավական կարգավորման առանձնահատկությունները.
- իրականացվել է Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և որոշ արտասամանյան երկրների քրեական օրենսգրքերում ամրագրված՝ գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմերի իրավահամեմատական վերլուծությունը.
- բացահայտվել և վերլուծվել են Նախագծի պրիզմայով վերջին օրենսդրական փոփոխությունների կապակցությամբ գործուն զղջալու մասին խրախուսական նորմերի կիրառման հիմնական խնդիրները.
- մշակվել են քննարկվող ինստիտուտին վերաբերող օրենսդրական ձևակերպումների կատարելագործմանն ու դրա բովանդակությանը

համապատասխանեցմանն ուղղված առաջարկությունները:

Ուսումնասիրության տեսական հիմքն են կազմել քրեաիրավական ոլորտի առաջադեմ գիտնականների աշխատությունները: Հեղինակը, ուսումնասիրելով վեր հանված հիմնախնդիրները, վիճահարույց հարցերի շուրջ իր գիտական միտքը համադրել է այլ գիտնականների տեսակետների հետ:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործող քրեական օրենսգրքերի, Նախագծի, արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրությունների իրավահամեմատական վերլուծության և առկա տեսական մշակումների վերլուծության հիման վրա փորձ է արվել համակողմանի և համալիր հետազոտության ենթարկել գործուն զղջալու մասին ընդհանուր և հատուկ նորմերի կիրառման հետ կապված առաջացող հարցերը:

Ա. Սարգսյանի տեսական դատողությունների և եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, գրականության մեծաքանակ աղբյուրների օգտագործմամբ, հարուստ իրավական և փորձառական հիմքով: Հատկապես, ցանկանում ենք առանձնացնել հեղինակի կողմից ուսումնասիրված արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերը, ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև առաջին ատյանի դատարանների դատական ակտերի ուսումնասիրումը և դրանց դրույթների ստեղծագործական կիրառումը ատենախոսությունում արտահայտած մտքերի ու արված հետևությունների հիմնավորման ժամանակ:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 9 հոդվածներն արտացոլում եմ ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Այնուամենայնիվ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճահարույց դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չազդելով աշխատանքի դրական գնահատականի վրա, լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն: Այսպես.

1) Ատենախոսն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը (ՌԴ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասը) շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, հայտնել է

կատարված հանցագործության մասին այլ եղանակով, ինչին հաջորդել է նրա կողմից մեղքի ընդունումը և (կամ) աջակցել է հանցագործությունը քննելուն և բացահայտելուն, կամ հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Վերոնշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից վերոնշյալ պայմաններից մեկի առկայության դեպքում, եթե առաջին անգամ կատարված արարքը անզգույշ հանցագործություն է կամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարելու փորձ:

(...):»

Ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված *բոլոր անզգույշ հանցագործությունների* կատարումից հետո, եթե անձը դրսևորում է համապատասխան վարքագիծ, որը ներառում է թվարկված *պայմաններից առնվազն մեկը* (օրինակ՝ հանցանք կատարելուց հետո կամովին ներկայանում է մեղայականով), ապա նա ազատվում է քրեական պատասխանատվությունից: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված անզգույշ մեղքի ձևով կատարվող հանցագործությունների ցանկը բավականին լայն է՝ դրա մեջ մտնում են, ի թիվս այլնի, կյանքի և առողջության դեմ ուղղված այնպիսի բարձր հանրային վտանգավորություն ունեցող արարքներ, ինչպիսիք են, օրինակ՝ երկու կամ ավելի անձանց անզգուշությամբ մահ պատճառելը կամ անզգուշությամբ երկու կամ ավելի անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելը: Դրա հետ մեկտեղ, ատենախոսի կողմից առաջարկվող ձևակերպումն իմպերատիվ բնույթ է կրում քրեական վարույթ իրականացնող մարմնի համար, ինչի արդյունքում մարդուն կյանքից ազնգուշությամբ զրկած անձը կամովին մեղայականով ներկայանալու դեպքում, եթե նույնիսկ վերջինիս կողմից չեն պահպանվում մնացած պայմանները, ազատվում է քրեական պատասխանատվությունից: Նախ՝ նման մոտեցումը խնդրահարույց ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում ամրագրված արդարության սկզբունքի տեսանկյունից, որի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու

հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Ավելին, առաջարկվող ձևակերպումը վիճահարույց է նաև տուժողի շահերի պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև չի ծառայում ՀՀ քրեական օրենսդրության խնդիրներին և պատժի նպատակներին:

2) Ատենախոսն առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. (...)

Հանցավոր համագործակցությանը (կազմակերպությանը) կամ դրա կառուցվածքային ստորաբաժանմանը մասնակցությունը կամովին դադարեցրած և դրա գործունեության մասին պետական իշխանության մարմիններին կամովին հայտնած, ղեկավարների և այլ մասնակիցների հայտնաբերմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա մասնակցությունը ***կապված չէ մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների կատարման հետ***: Նախ՝ գտնում ենք, որ նշյալ ձևակերպման մեջ «պետական իշխանության մարմիններ»[1] եզրույթի փոխարեն նպատակահարմար է օգտագործել «քրեական հետապնդման մարմիններ» եզրույթը, ինչը կապահովի նյութական և դատավարական նորմերի փոխկապակցվածությունը: Անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե, այնուամենայնիվ, քննարկվող հոդվածում խոսքը պետք է գնա «մարդու կյանքի և առողջության», թե միայն «կյանքի» դեմ ուղղված հանցագործությունների մասին: Նշյալ դիտողությունը պայմանավորված է նրանով, որ ատենախոսը աշխատության ներածության և եզրափակիչ մասում (էջ 146) օգտագործում է տարբեր ձևակերպումներ:

3) Ատենախոսության մեջ ներկայացված են մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտին վերաբերող գործող օրենսդրական ձևակերպումների կատարելագործմանը: Մինչդեռ, ըստ էության անդրադարձ չի արվել այն հարցին, թե արդյոք հնարավոր է քննարկվող ինստիտուտի կիրառումը հանցագործությունների համակցության դեպքում, մասնավորապես այն դեպքերում, երբ գործ ունենք իրական կամ իդեալական համակցության հետ, որոնց մեջ մտնում են, օրինակ, միայն ոչ մեծ

---

[1] ՀՀ օրենսդրության մեջ առհասարակ օգտագործվում է «պետական կառավարման համակարգի մարմիններ» տերմինը: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ նշյալ տերմինի կիրառումը տվյալ դեպքում նույնպես տեղին չէ:

ծանրության հանցագործություններ: Հարկ է նշել, որ քննարկվող հարցը ատենախության 27-րդ էջում լուսաբանվել է թռուցիկ կերպով, ուստի հնարավոր չէ պատկերացում կազմել դրա վերաբերյալ ատենախոսի դիրքորոշման մասին: Միաժամանակ հայտնում ենք, որ նշյալ խնդրի կարևորության մասին խոսվել է նաև Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգում[2]:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք հիմնականում կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. Ադելինա Արմենի Սարգսյանի ատենախոսությունը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իրենից ներկայացնում է գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրներին վերաբերող համակարգված, համալիր, գիտական նորույթ պարունակող և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ *ԺԲ.00.05* - «Քրեական իրավունք և կրիմինոլոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
Իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Ա.Ա. Ռաշիդյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու
Ա. Ա. Ռաշիդյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ.՝ **Ռ.Ս. Կանարաբովա**

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98725